

ՄԱՍԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς, редакция «Маск».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253:

խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

խմբագրութեան կողմից. Բաղադրական տե-
սութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնա-
կան հաղորդագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի տեսութիւն.
—ՀԵՐԱՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» համարները, սկսած յունվարի
19-ից, լոյս չը տեսան այն պատճառով,
որ Թիֆլիսի տպարանները չէին գոր-
ծում: Թիֆլիսի բոլոր միւս լրագրիչներն
էլ, բացի պաշտօնական «ԷԱՅՏԱՐ» լրա-
գրից, նոյն վիճակի մէջն էին: Երեկվա-
նից տպարաններում սկսվեցին աշխա-
տանքները և մենք կարողութիւնս ստա-
ցանք այսօր լոյս հանելու մեր լրագրի
ներկայ համարը:

Պաշտօնական տեղեկութիւնները, որ
մենք զետեղում ենք «Մշակի» ներկայ
համարում, գաղափար կը տան այն մի
քանի եղբուկներին մասին, որոնք տե-
ղի ունեցան վերջին օրերը Թիֆլիսում:

«Մշակի» բաժանորդները կը ստանան
բաց թողված օրերի համար լրակատար
բաւարարութիւն: Մենք կը տանք մի
շաբթ 1½ թերթ պարունակող, կամ աւել-
լորդ համարներ, որպէս զի լրացրած լի-
նէր տպագրութեան համար նշանակված
նիւթը:

Այս յունվարին, ինչպէս յայտնի է,
խանգարված էին և հաղորդակցութեան
ճանապարհները: Ձիւնների և փոթորիկ-
ների պատճառով կտրված էր հաղորդակ-
ցութիւնը թէ եւրոպական Ռուսաստանի
և թէ Ապրիլիան թերակղզու հետ:
Այժմ հաղորդակցութիւնը վերականգնվել
է, թէ և երկաթուղու գնացքները դեռ
չեն կարողանում ձեռք կերպով հետեւ
նշանակած ցուցանիշներին:

Յամենայն դէպս մեր բաժանորդները
թող աչքի առաջ ունենան պօստի համար
ստեղծված դժուարութիւնները, սպասեն
մի քանի աւելորդ օր, եթէ լրագրի այս
կամ այն համարը կուշանայ: Նոյն դրու-
թեան մէջ ենք մենք մայրաքաղաքի լրա-
գրիչների վերաբերութեամբ:

ՔԱՂԱՔԱՂԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լրացաւ մի ամբողջ տարի այն ճակա-
տագրական օրերից, երբ Պօռտ-Արտուրի
նաւահանգստում կանգնած ռուսական
նաւատորմը ենթարկվեց յարձակումի եւ-
պոնական նաւատորմի կողմից և սկսվեց
ռուս-եպոնական պատերազմը:

Մեր ընթերցողներին յայտնի են այն
բոլոր եղելութիւնները, որոնք տեղի ու-
նեցան Հեռուոր Արեւելքի շրջանում և պա-
տերազմական դաշտերում և այն մեծ
ընդհարումները, որոնք դարձրին ռուս-
եպոնական պատերազմը պատմական
խոշոր պատերազմներից մէկը:

Ամբողջ տարի անցաւ և պատերազմը
չը վերջացաւ: Ներկայումս ռուսական և
եպոնական զօրաբանակները անգին
զօրքերով կանգնած են միմեանց դէմ և
սպասում են յարմարութիւնների գործե-
լու յարձակողական շարժումներ միմեանց
վրա: Պատերազմական դաշտը գտնվում
է Լաօսանի և Մուկդէնի միջև ընդարձակ
տարածութեան վրա և ճակատ առ ճակատ
կանգնած զօրքերի շղթան արեւմուտ-
քից դէպի արեւելք և հարաւ արեւելք ձգ-
ված է մօտ վաթսուներեք միլիոն:

Հեռագրական գործակալութեան տեղե-
կութիւնները, որ կը կարգան մեր ըն-
թերցողները, ցոյց են տալիս, որ այդ
շղթայի արեւմտեան մասում վերջին երկու
շաբաթվայ ընթացքում տեղի ունեն լուրջ
ընդհարումներ, սակայն դրանք դեռ այն
խոշոր և միահամուռ զօրաշարժերը չեն,

որոնք ունենան վճռական նշանակութիւն:
Եւրոպայի կարողացաւ ամբողջ տարվայ
ընթացքում խաղաղութիւն պահպանել և
չը բարդացնել սկսված պատերազմը: Պե-
տութիւնները այժմ էլ ամեն ջանք գործ
են դնում առաջ չը բերել նոր բարդու-
թիւններ: Եւ քիչ չէ այն անձանց թիւը,
որոնք կը ցանկանային նոյն իսկ պատե-
րազմող կողմերին հաշտեցնել: Սակայն
այդտեղ լուր ցանկութիւնը բաւական չէ:
Դա բաղադրեալ և դժուար լուծելի հարց
է: Եւ յամենայն դէպս, ներկայումս մենք
չենք կարող յուսալ շուտաւրտ հաշտու-
թեան վրա:

Եւրոպական պետութիւններին մէջ, ան-
կախ Հեռուոր Արեւելքի գործերից, այն-
պիսի սուր միջադպիսի տարաձայնու-
թիւններ չը կան, որոնք կարողանային
բարդութիւններ առաջ բերելու Հեռուոր
Արեւելքի գործերի վրա ազդելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

(Թիֆլիսի, Բաքուի եւ Կովկասի այլ տեղերի
բաւարարական խաղաղութիւնները)

Բազուի նաւահանգիստի բանւորների մէջ
ծագած խմորումն արդէն դեկտեմբեր ամսին
ազդեց Բաթումի բանւորների տրամադրու-
թեան վրա: Բազուից եկած ագիտատերերի
ազդեցութեան տակ դեկտեմբերի 20-ի առա-
ւօտեան Բոտլիզի և Մանթաշեանի գործա-
բանների բանւորները, 300—400 մարդ, խըմ-
բով հաւաքվեցին Բաքուի Գետի կամուրջի
վրա՝ ապրանքային կայարանի մօտերը, պար-
զելով մի քանի կարմիր դրօշակներ՝ յեղափո-
խական մակագրութիւններով և ատրճանակ-
ները դէպի վեր կրակելով, երկաթուղու գծե-
րով դիմեցին դէպի երկաթուղային դէպոն,
կոչելով: Սակայն 10 օրէք յետոյ նկա-
տելով մօտեցող կազակներին, ամբողջ ցրվեց՝
առանց որ և է դիմադրութեան: Ձեռք չառն-
վեց ոչ մի ծայրայեղ միջոց, և հետեւալ օրն
արդէն բոլոր գործարաններում բանւորները
խաղաղութիւնով վերականգնեցին աշխատանքները:
Բայց խմորումը բանւորների մէջ չը հան-
գարուից:

Յունվարի 17-ի առաւօտեան Բաթումի նա-
ւահանգստում երեւցին 50)-ի չափ բանւոր-
ներ և Ռուսական և Բոսնիական շոգենաւային
ընկերութիւնների երկաթուղային նաւաւա-
տոյցների բոլոր բանւորներին հետնելու տա-
րան, արգելելով նրանց աշխատել՝ մասին
սպառնալով թաղի: Պահպաններին թողին ի-
րանց տեղերում, որ հակն ապրանքների կոյ-
տերի վրա: Անկարգութիւններ չը կատարե-
ցին. բոններ նաւ դնել, նաւից հանել և տե-
ղափոխել մի առ ժամանակ դադարեց: Գոր-
ծադուր անողները պահանջում են օրավարձի
յաւելում: Մի և նոյն օրը գործադուր արին
Րիօն կայարանի բոֆէտի ծառաները, պա-
հանջելով որ բոնիկներն անկողնին 1½ ան-
գամ և բնակարան տան: Ձիջելով կայարանի
գլխավորի համագեցուցիչ խօսքերին, ծառա-
ները մնացին աշխատելու մինչև յունվարի
20-ը: Հետեւալ օրը, յունվարի 18-ին՝ գոր-
ծադուր արին բոլոր վերանորոգող բանւոր-
ները, նոյնպէս և գծի վրայից անցնելու գոր-
ծում բանող պահպանները, որոնք ծառայում
են Բաթումից մինչև Սաջկախօ. վերջիններս
էլ թողին իրանց պաշտօնատեղերը և հետա-
ցան, պահանջելով վարձագին աւելացում:

Յունվարի 10-ին Բաթումի գործարաննե-
րում միայն մի անշան աշխատանք էր կա-
տարվում: Երկաթուղու և ուրիշ բոլոր հիմ-
նա կոթիւնների բոլոր կանտորներին և
կառուցողները, սպառնալով նամակներ ստանա-
լով, աշխատանքները դադարեցրին: Կառա-
պանները, որ ոստիկանութեան պահանջով
զուրս էին եկել փողոց, տուն վերադարձան,
վախենալով գործադուր անողների սպառնա-
լիքներից:

Գործադուրից սկսած չը մնաց և Թիֆլիսը:
Այստեղ նա սկսվեց յունվարի 18-ին. անդը-
կովկասեան երկաթուղու արհեստանոցների,
բոլոր մասնաւոր տպարանների և մեքենայի-
նական բոլոր գործարանների բանւորները
դադարեցին գործելուց: Գործադուր անողների
ընդհանուր թիւն էր 3000—4000 մարդ: Բացի
«ԷԱՅՏԱՐ»-ից, ոչ մի լրագիր լոյս չը տեսաւ:
Յունվարի 19-ին գործադուրին միացան Ադի-
խանովի կառու գործարանի բոլոր համա-
րները, ծխախոտի «Միք» գործարանի բոլոր
բանւորները և Թամաշվիլի բաղնախաւարի
բոլոր գործակատները: Այդ օրն էլ, ընդհա-
նուր առմամբ, գործելուց դադարեցին մինչև
4000 մարդ:

Ցերեկվայ ժամը 3-ին Դիդուբեի Բաթում-
մեան հրապարակը հաւաքվեցին 2000-ի չափ
երկաթուղային բանւորներ, որոնք պիտա-
ւին ցանկութիւն յայտնեցին ընտրել իրանց
միջոց պատգամաւորները՝ նահանգապետին
յայտնելու իրանց կարիքները և խնդրեցին,
որ ապահովեցի այդ պատգամաւորներին անձեռ-
մխելութիւն: Բանւորների այդ ցանկութիւն-
ներին բաւարարութիւն տրվեց, այն պայմա-
նով, որ կը յայտնեն գործադուրներին միայն
տնտեսական կարիքների մասին և հարցերը կը
ընկնեն միայն այդ սահմանների մէջ: Սակայն
բանւորները պատգամաւորներ ընտրել չը ցան-
կացան և պահանջեցին նախընթաց օրը ձեռ-
բակալված անձերին ազատել:

Այդ օրվայ ընթացքում ձեռքաւորվեցին եր-
կաթուղային բանւորներից մի քանի ագիտա-
տերներ, ուրիշ առևտրական և արդիւնաբերա-
կան հիմնարկութիւնների բանւորներին աշ-
խատանքները թողնելու ստիպող անձերին և
մի քանի մարդկանց, որոնք փորձ արին ճա-
նոր արտասանելու:

Յունվարի 20-ի առաւօտվանից Թիֆլիսում
դադարեց էլէքտրաբարձի և ձիաբարձի շար-
ժումը, բայց ձեռք առնված միջոցների շնոր-
հով, ցերեկվայ ժամը մէկից յետոյ մասամբ
վերականգնեց միայն ձիաբարձի շարժումը դիւ-
ւորների հակոթութեան տակ և նրանց ձեռքով:

Յունվարի 21 և 22-ին գործադուրը Թիֆ-
լիսում շարունակվեց: Նրան միացան Բոգար-
շեանի ծխախոտի գործարանի և Տօլէի, Թաի-
րօվի ու Ալիխանովի սապոնի գործարանների
բանւորները, բայց գործադուր անողներն ա-
ռանձին ընդհանուր չունեցան ոստիկանութեան
հետ: Ձիաբարձը շարունակում էր շարժվել
զինւորների հակոթութեամբ և նրանց ձեռքով:

Յունվարի 20-ի առաւօտեան բանւորների
մի ոչ մեծ խումբ յարձակվեց բաղնախաւարի
դէպոն մէկում Աւալեան ձիաբարձի վազոնի վրա,
ստիպեց ձառնորդներին վայր իջնել և սկսեց
կտրատել վազոնը, բայց նրանց արգելեց մօտ
վազող 6 զինւորացի պահակը: Բանւորներն
իսկոյն շրջապատեցին զինւորներին: Տեղի ու-
նեցաւ ընդհարում, որի ժամանակ մի զինւոր
թերթ և քեծվածք ստացաւ գլխին և ձեռքին:
Ձիւնւորներն սկսեցին ցրել անկարգութիւն ա-
նող բանւորներին հրացանի կոթերով և, օգ-
նութեան հասած դրագուններ խմբի շնորհով,
գործադուր անողների ամբողջ շուտով ցրվեց:
Ձեռքաւորվեցին 6 հոգի:

Աշխատանքները շարունակել ցանկացող բան-
ւորների համար ձեռք առնվեցին պաշտպանու-
թեան բոլոր միջոցները: Այդ բանի շնորհով՝
երկաթուղու բանւորների մի մասը վերադար-
ձաւ աշխատելու:

Բաթումում գործադուրը նոյնպէս շարունակ-
վում էր: Կառու բանւորները նորից թողին աշ-
խատանքները:

Յունվարի 21-ի առաւօտեան Սամարէղի
կայարանում բանւորները, մօտ 300 մարդ,
ազմուկով, շուրջով և զինքերի պայթիւններով
զնուում են երկաթուղու կայարանը, զօրով հե-
ռացնում են գործից բոլոր «տարբերակներին»,
վազոններ իրար կապողներին և զնացը կազ-
մողներին, — ներս են խուժում կայարանի դա-
սնեակները շէնքերը և դուրս տանում բոլոր
կանտորներին, կառուներին և հեռագրական
պաշտօնականներին, որոնց արգելեցին գործել:

սպառնալով սպանել: Կայարանից ամբողջ դի-
մում է դէպի մօտակայ Սամարէղի գիւղի շու-
կան, ուր նոյնպէս բռնի՝ փակում են բոլոր
խանութները, վաճառատները և միւս առևտրա-
կան հաստատութիւնները: Այստեղ սկսվող
բանւորների հետ միահնում են և գիւղացիները:
Տեղի է ունենում ընդհարում. սպանվում է
գիւղի գիւղագետը և գիւղը կրակ տրվում.
այրվում էին խանութները:

Գիւղերը, Սամարէղից 3 վերստ դէպի Բա-
թում, չարամիտները հանել էին երկաթուղու
գծերը, բայց այդ բանը նկատվեց վաղօրոք:
Այժմ ուղին կարգաւորված է:

Փօթիւում գործադուր են արել նաւակայանի
բանւորները, և ապրանքների շարժողութիւն-
ները դադարել են:

Յունվարի 21-ի երեկոյեան գործադուրի ա-
գիտատերները եռանդով տարածեցին Թիֆլի-
սում հակա-կառավարական կոչներ, որի ժա-
մանակ ոստիկանութիւնը ձեռնարկեց մի քա-
նի յանցաւորներին: Յունվարի 22-ին բանւոր-
ների գործադուրը շարունակվում էր, բայց օրը
խաղաղ անցաւ:

Կիրակի, յունվարի 23-ին Թիֆլիսում նկատ-
վեց աստիճանաբար աճող մի բանւորական
հոսանք դէպի Գոյովինսկի պրօպագանդիստ
սկի բազար և Երևանեան հրապարակ: Ցերեկվայ
ժամը 12-ի մօտերը Թատրոնական փողոցին կից,
Կայսերական թատրոնի կողքին, յանկարծ Գօլ-
վինսկի պրօպագանդիստները մի ամբողջ, որին ան-
միջապէս միացան սրբապետական եղած բանւոր-
ները: Ցուցարարները, մօտ 300 հոգի, պարզեցին
կարմիր դրօշակ, սկսեցին ամեն կողմ կոչե-
րել և ատրճանակներից կրակ բանալ ոստի-
կանները վրա, որոնք յարձակվել էին դրօշակը
խլելու: Այն գործադուրը, որ դրօշակը խլում
էր ցուցարարի ձեռքից, ստացաւ երկու լուրջ
վէրք և վայր ընկաւ: Միւս գործադուրը, որ նո-
րից իւրեց դրօշակը, նոյնպէս վերադարձեց և
ընկաւ, իսկ երրորդ գործադուրը, որ վերջնա-
կանապէս իւրեց դրօշակը և ձեռքաւորեց դրօ-
շակալիքին, ստացաւ խնջալի մի վէրք:

Անկարգութիւնը 5 օրէքից աւելի չը
տևեց: Ցուցարարներին ամբողջ, որի անդամ-
ներից շատերը զինված էին, արագ ցրել եկաւ
բաղադրային ոստիկանութեան և ոստիկանա-
կան պահապանների ձեռքից:

Ձեռքաւորվեցին 30 ցուցարար: Հաւաքեցին
2 պարկ կոչեր կամ պրօպագանդաներ: Դրա-
նից յետոյ դէպի տեղը հասան կազակներ և
զօրամասեր, բայց նրանք ստիպած չէլու
զէնք գործ ածել: Ամբոխի մի մասը, հալած-
վելով կազակներից և ձիաւոր ոստիկաններից,
փախաւ մասա Բաքուի միջոցի ծայրին
եղած սարայը և փակեց նրա դռները: Երբ
ոստիկանութիւնը կողմնակի ճանապարհով մը-
տաւ սարայը, բանւորները յարձակվեցին ոս-
տիկանի վրա և խնջալով մի քանի վէրք
հասցրին նրա գլխին, որոնցից թուրացած նա
վայր ընկաւ: Սարայում փակված ամբոխին
շուտով ցրվեցին, փախցնելով զանազան կողմեր:
Փախած ցուցարարները, ըստ երևոյթին, ու-
զում էին նորից հաւաքվել Բազարնախա հրա-
պարակում, բայց ցրվեցին նրանց:

Վնասված ցուցարարների թիւը դեռ իսկա-
պէս չէ որոշված, բայց յայտնի է, որ հիւան-
դանոցները տարված են 10 վիրաւոր, որոն-
ցից մէկը ծանր վէրքերով: Գօրծադուրից
վիրաւորված են 4 հոգի, որոնցից մէկը ծա-
րապէս. մի քանիսն ստացել են քերծվածքներ
և կտրվածքներ:

Անդրկովկասի երկաթուղու գծի վրա գոր-
ծադուրը շարունակում է տարածվել վերջին
օրերս: Յունվարի 22-ին գործադուր արին
Կիւրօնի, Նիգօնի, Սաջկախօ, Կապիտանի
Արաշա և Չալդիի կայարանների «տարբեր-
ակները» և պահապանները:

Փօթի կայարանում մի և նոյն օրը, բացի
նաւահանգստի բանւորներից, գործադուր ա-
րին մարզանցի բանւորները, իսկ յունվարի
23-ին՝ բոլոր շոգենաւորների միջնաւորները:
Վերջիններս շոգենաւորներ թողին գծերի վրա
և դէպօնեում ստանաւ, առանց կրակի:

Յունվարի 22-ին, ցերեկվայ մօտ ժամը 1-ին, զինուորական գնացքը, որ տանում էր Կուրիսի գոհվող զեպի Բաթում, խորտակվեց, որովհետև չարամիտ երե Սամարեղի կայարանի մօտ հանել էին գծերը: Մարզկանց դժբաղդություն չէ պատահել:

Վերջին օրերի ընթացքում գործադուր թիֆլիսում տարածվեց սպանդանոցում միս մորթողների մէջ, իսկ յունվարի 25-ի երեկոյց գործադուր արին և ֆարմացիմոներն ու զեպուներն աշակերտները, նպատակ ունենալով փակել տալ զեպուները: Նրանց աշխատանքից հետոցնող անձերից ձերբակալված են 12 հոգի:

Յունվարի 24-ի առաւօտեան ժամը 7-ին, գործադուր արածների սպանդանոցների ազդեցութեան տակ, աշխատանքները դադարեցրին և ցրվեցին իրանց տները Բաթումի երկաթուղու զեպու բանտներն ու արհեստատեղիները:

Յունվարի 25-ից թրվելուի մօտ գործադուր են արել աշխատանքների բանտները: Կվիրիլի և Շօրապան կայարանների զեպուներում, իսկ վերջինում նաև ամսով վարձված վերանորոգող բանտները, բնակիչները և բնակիչ վարձողները ցրվեցին, առանց անկարգութիւններ առաջացնելու:

Մի և նոյն օրը Գանձակում, երկաթուղու զեպու բանտները, 200-ից ավելի մարդ, աշխատանքները դադարեցրին և պահանջեցին իրանց նիւթական վիճակի բարելաւում, իսկ երեկոյեան զեպու գործադուրները սպանդանոցների ազդեցութեան տակ աշխատանքը դադարեցրին երկաթուղու միւս ստորին ծառայողներն էլ:

Յունվարի 26-ին գործադուր տարածվեց նաև Չիաթուրիում:

Յունվարի 28-ի առաւօտեան Կվիրիլիում գործադուրների խումբը մտադուրութիւն ունէր ցոյց անել, բայց փողոցներում թափող կազմիւր հէնց սկզբին՝ տեղական ոստիկաններից մէկը, որին ամբողջ ծեծեց, երկու անգամ կրակ արեց. ցուցարարներից մէկը ծանր վիրաւորվեց. ամբողջ ցրվեց:

Յունվարի 29-ի գիշերը՝ Լանչուտի կայարանի մօտը կամուրջներից մէկի վրա նկատվեց գծի փչացումը լինելը. երկաթէ գծերից մէկը հանված էր, իսկ գերանները փչացված: Վնասումն իսկոյն վերաշինեցին:

Յունվարի 26-ից վերսկսվեց Բազուի տպարանական բանտները գործադուրը, որից առաջացաւ այն, որ նորից լրագրողները դադարեցին Յունվարի 28-ին դրանց միացան երկու գործադուրների բանտները: Անկարգութիւններ չկայան:

Յունվարի 25-ին Բաթումում բոլոր գործադուրները գործադուր արին: Ստանդարտը և վաճառատները բաց արին ոստիկանութեան ստիպումով: Կարեւոր դուրս չեկան փողոց: Յունվարի 26-ի առաւօտեանից բոլոր խառնութիւնը բացվեցին և կարեւոր մի մասը գործի սկսեցին ոստիկանութեան ձեռնարկած միջոցներն աչքի առաջ ունենալով: Մի շրջանաւորում ուսու բանտները, ոստիկանութեան պաշտպանութեան տակ վերսկսեցին աշխատանքը: Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին 3 բանտը սպանեցին աւագ ոստիկան Կոնստանտինովին: Սպանողները փախան: Յունվարի 28-ին գործադուր արին մասնաւոր անձերի և հիւրանոցների ծառաները: Մի և նոյն օրը սպանվեց երկաթուղու կոնդուկտոր Իւրիշուլը անյայտ չարամիտների ձեռքով:

Բուժարխում անկարգութիւններն սկսվեցին յունվարի 19-ին: Երեկոյեան ժամը 6-ին բազարային բուլվարից դուրս եկող ամբողջ շուկային 100 հոգու չափ երկտասարդներ, որոնք «Մարսէլէզ» երգելով, բղաւելով և շրջանցելով շարժվեցին Գիմնազիական փողոցով, ծովային Միքայէլեան փողոցը՝ Ուպրովայի մօտերը, զեպի պատճառ: Այդտեղ ցուցարարներին դիմաւորեց ոստիկանութիւնը, որը և կարողացաւ վերջապէս ցրել ցուցարարներին: Ամբողջ ճանապարհին կոտորածից փողոցների լայնութիւնները, խանութները, ուպրովայի, թատրոնի, արական զինավաճառի և Բէլիգիօնի դեղատան ապակիները: Ցուցարարներից ձերբակալված են 7 հոգի: Հետեւեալ օրը նոյնպէս 100-ի չափ երկտասարդներ ուղեցին վերսկսել ցոյցը, բայց «Բոսալա» հիւրանոցի մօտ պատրաստ գտնված ոստիկանական պահապանները անմիջապէս ցրեցին ամբողջը, որը կարողացաւ կոտորատով միայն մի քանի լայնութիւններ: Տեղի ունեցած ընդհարման մէջ մի ոստիկան գլխին թեթիւ մէկը ստացաւ: Ձերբակալվեցին 40 հոգի: Ցանցաւորներին ենթարկուած են դատաստանի: Յունվարի 25-ին Բու-

թայիսում նորից խանակութիւններ տեղի ունեցան, բայց ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհով անյապաղ դադարեցին:

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, որ հիւանդութիւնից ապաքինել էր, յունվարի 28-ին թիֆլիսից մեկնեց Եւփրատին:

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսի Պետերբուրգ ուղարկած պատգամաւորութիւնը բաղկացած Ներսէս արքեպիսկոպոսից և Մեսրոպ վարդապետից, որ պէտք է ներկայանար ներքին գործերի մինիստր իշխան Սվետոսլով-Միլոսլով, հեռագրով թուրքականութիւն է խնդրել Վեհափառ Կաթողիկոսից ներկայացնել զեկուցագիրը նոր մինիստր հօգիւմէյտը Բուլբուլին:

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 17 թերթից:

Նիւթերի բարդվելու պատճառով մի քանի յօդուածներ անկարող կը լինեն լոյս տեսնել լրագրի առաջին համարներում, իսկ մի քանիսն էլ կորցրին իրանց այժմութիւնը:

Ինչպէս և գուշակել էինք, Թաւրիզի առաջնորդութեան համար ընտրված Սարաջեան Յովսէփ կաթիկոսը հրաժարվել է ընդունել նոր պաշտօնը և Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով պատուէր է տուել պատգամաւորական ժողովին առաջնորդի նոր ընտրութիւն կատարել:

Կիրակի, յունվարի 30-ին, թիֆլիսում հողին յանձնեցին Պետրոս Ալիքեզեանի մարմինը: Հանգուցեալը մի քանի տարիներ եղել է նախկին հայոց Հրատարակչական Ընկերութեան փոխնախագահ, մի հնգամեակ թիֆլիսի քաղաքային դուռնայի ձայնաւոր, երկու տարի թիֆլիսի առեւտրական աւագ և երկար տարիներ թիֆլիսի փոխադարձ ապահովութեան ընկերութեան նախագահ: Հանգուցեալը յայտնի էր իրեն շիտակ, ճշգրտագին, գործունեակ և պատուազգաց մի անձնաւորութիւն: Շնորհիւ ձեռնարկու ոգու նա մասնակցում էր այնպիսի գործերի, ինչպէս են ձիաբարձի ձեռնարկութիւնը թիֆլիսի աշակերտ մասում և Գանձակում, արդիւնաբերական մի քանի խոշոր հիմնարկութիւններ, որտեղ յանձն էր առել պատասխանատու պաշտօններ: Այլընդան հիւանդացաւ մահից մի քանի շաբաթ առաջ և յոյս ունէր առողջանալու, որովհետև առհասարակ առողջ և ամուր կազմուածքի տէր էր: Սակայն հիւանդութիւնը անպատեխի կերպով դարձաւ ճակատագրական: Նա մեռաւ 49 տարեկան հասակում:

Յունվարի 29-ին, շաբաթ օր, նշանակված էր թիֆլիսի դուռնայի իրաւաստները արտակարգ նիստ, որ թուրքաւորված էր Կովկասի կառավարչապետի պաշտօնակատարից՝ ընդունելու համար գործադուրի վերաբերեալ այն մի քանի հարցերը, որոնք կապ ունեն ընդարձակ հանրեր հետ: Եւ և որոշեալ ժամին իրաւաստները հաւաքվել էին, սակայն նիստը չը կարողացաւ կայանալ այն պատճառով, որ վերջին պահին կարգադրութիւն էր եղել նիստը դադարեցնելու, սակայն դուռնայ անյարմար համարեց դադարեցնել նիստ անելը և որոշեց միջնորդել թուրք տալ, որ նիստը հրապարակային լինի:

Երէկ, երկուշաբթի, յունվարի 31-ին, Հայոց Դրամատիկական Ընկերութեան հիմնադրութեան 3-րդ տարեդարձին, հայոց դրամատիկական խումբը ներկայացրեց առաջին անգամ հայերէն իշխան Սուքրատովի «Դաւաճանութիւն» պիէսը, որի համար յատկապէս հրաւերված էր Բազուից տիկին Սիրանուշը: Բոլոր տոմսակները ծախված էին: Յաջորդ անգամ կը խօսենք այդ ներկայացման մասին:

Յունվարի 17-ին, թիֆլիսի դատաստանական պալատում, պալատի աւագ նախագահ սենատոր Վ. Բ. Չապալովու նախագահութեամբ, գտնվում էր Արեւիկաների գործարանի բանուր Գրիգորի Նասաձէ, որ մեղադրվում էր տարածելու նպատակով մեծ քանակութեամբ հակահեղափոխական շարժումներ ղեկավարելու համար: Գործը ընդունւ էր դադարեցնել Մեղադրում էր պալատի դատաւարին օգնական Սօպիւնսկի. մեղադրեալին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Տիգ-

րան Յովհաննիսեան: Դատաւճիւրը կարգացվեց դռնաց: Պալատը, նոր պատժագրերի 132 յօդուածի 2-րդ կէտի հիման վրա, մեղադրեալին դատապարտեց վեց ամսվայ կալանաւորման, հաշիւով այդ վեց ամսվայ մէջ և այն չորս ամիսը, որ մեղադրեալը անցրել է բանտում նախ քան դատի ընկնելը, այնպէս որ մեղադրեալը կալանաւորված է մնալու միայն երկու ամիս:

Գինեքալ Տրեպովին Պետերբուրգի գինեքալ-նահանգապետ նշանակելու առիթով «Պետ. Հեռագրական Գործակալութիւնը» արտասահմանեան թերթերին հետեւեալ հեռագիրն է ուղարկել. «Արտասահմանեան մամուլի ցոյց տուած անվստահութիւնը գինեքալ Տրեպովին նշանակման առիթով»-ինչպէս ներկայ դրութիւնը բարեկեցիկ ընդունակ անձի, Պետերբուրգի պաշտօնական և բօրայական շրջաններում զարմանք պատճառեց: Պետերբուրգում այդ միջոցը բոլորովին ուրիշ տպաւորութիւն թողեց, և դա արտայայտվեց նրանով, որ բօրայական գններն ամբաստան: Գինեքալ-նահանգապետութիւն ներմուծելը Պետերբուրգում դիտվում է իբրեւ ժամանակաւոր միջոց, որ ձեռք է առնված արտակարգ զէպերի պատճառով: Վերջին զէպերը ցոյց տուին, որ ոստիկանութիւնն անկարող է ոչնչացնել բանտարկան շարժումը և կամ ղեկավարել նրան, որովհետև բանտները գնացին քաղաքական պահանջների ճանապարհով: Այդպիսի պայմաններում միայն արտակարգ լրագրութիւններ ունեցող մի մարդ կարող է հանգստութիւնը վերականգնել, իսկ հանգստութիւնն է, որ հանդիսանում է բարենորոգումների մտցնելու առաջին և ամենանհրաժեշտ պայմանը: Անարդար կը լինէր ենթադրել, որ գինեքալ-նահանգապետութիւն հաստատելը հանդիսանում է իրենից ցուցում այն բանի, որ կառավարութիւնը նորից սկսում է ուղղել իր գործունէութիւնը զէպի բեկեցիւ: Այն հանգամանքը, որ գինեքալ-նահանգապետն սկսեց իր գործունէութիւնը ֆինանսներէ մինիստրի հետ միասին, և բանտներին դիմելով մի յայտարարութիւնով, որով խոստանում էր մի շաբաթ բարենորոգումներ հասարակական ասպարէզում՝ ցոյց է տալիս, որ գինեքալ-նահանգապետը նշանակված չէ ամենեւին ճշգրտ միջոցներ գործադրելու համար և որ մտադրութիւն կայ կարգը վերահաստատել ոչ միայն այդ միջոցներով, այլ և ազգաբնակչութեան պահանջներին բաւականութիւն տալով:

Մայրաքաղաքի լրագրողները հաղորդում են, որ արգելադրութեան մինիստրութեան մէջ լրանարկան հարցի համար կազմված յանձնաժողովը մօտ օրերս կը սկսէ ընդել գործադուրների ազատութեան խնդիրը: Այդ վարչական աշխատանքներն պատճառ է տուել այն համոզումը, որ գործադուրները ներկայ հասարակական տնտեսական կեանքում անհրաժեշտ երևոյթներ են և որ պէտք է նրանց տալ օրինական կազմութիւն և գոյութեան իրաւունք: Բայց որովհետև մինչև այժմ գործադուրները Ռուսաստանում արգելված էին և նրանց մասնակցելը ոճիւր էր համարվում, իսկ միւս կողմից նրանք ճակատադրական անհրաժեշտութիւն էին—այդ պատճառով առաջանում էին և զեռ առաջանում են չափազանց տխուր ու ողբալի երեւոյթներ: Այդպիսի պայմաններում գործադուրները կազմակերպվում էին գաղտնի ձևով և միշտ տխուր ընդհարումների տեղիք էին տալիս: Իսկ ի՞նչ նրանք օրէնքով թուրքաւորված կը լինեն, կունենան կանոնաւոր կազմակերպութիւն և սեփական դրամագումար, այդ պարագայում բանտներն ամեն մի թեթիւ պատճառի համար իրանց դրամագումարը և ժամանակը վանագի չեն ենթարկւ և գործադուր կանոն լով այն ժամանակ, երբ ծայրագոյն անհրաժեշտութիւն կը լինի, Բացի դրանից՝ ազատ գործադուրները ժամանակ կը կազմակերպվի միջնորդող օրգան, որը յաճախ կը նախատեսէ և դրածադուրները առաջը կառնէ, իսկ արգէն հրատարակված գործադուրներին էլ կաշխատի շուտով վերջ դնել:

Յունվարի 21-ին Մօսկվայի առեւտրական կուրսերի ուսանողները և ուսանողներինը՝ կուրսերի հոգաբարձութեան մանկավարժական կոմիտէի ներկայացուցիչներ հետ միասին՝ որոշում կայացրին, որ այլ ևս զբաղմունքները շարունակել չէ կարելի, մինչև աւելի բարեպաշտ հանգամանքներ: Կուրսերը մի առ ժամանակ փակված են:

Յունվարի 23-ին Մօսկվայի քաղաքային մարքութեան և կոյուղիների ծառայողները գործադուր արին, մի շաբաթ պահանջներ ներկայացնելով:

Յունվարի 23-ին կայացաւ Մօսկվայի մանկավարժական ընկերութեան ժողովը, որ, ի միջի այլոց, որոշեց հետեւելը. «Ընդունել, որ կրթական վարչութիւնը սխտմամտիկաբար արգելք է հանդիսանում ուսու հասարակութեան բոլոր լուսաւորիչ ձեռնարկներին, նախապատուութիւն տալով ծխական-եկեղեցական դպրոցներին՝ նա սահմանափակում կամ նեղացնում է դասատուութեան շրջանակը. նա ստեղծում է դասատուների համար մի այնպիսի դրութիւն, որը նրանց զրկում է անհատական իրաւունքներից և մանկավարժական կազմի վրա դնում է ոստիկանական պարտականութիւններ: Մանկավարժական ընկերութիւնը անհրաժեշտ է համարում, որ կրթական հաստատութիւններ, ժողովներ և կուրսեր բաց անելու թույլտրման միայն մի հասարակ յայտարարութիւնով—այսինքն՝ ձեռնարկողները յայտանեն, որ սկսում են այս ինչ բանը և այլ ու ոչ մի թույլտուութեան չը սպասեն. որ կրթական—դաստիարակչական գործունէութեան վրայից պէտք է վերացնել վարչական բիւրօկրատական վերահսկողութիւնը և հիմեղ հասարակութեան ազատ վերահսկողութեան սկզբունքը: Մանկավարժական ընկերութիւնը խոստովանում է, որ ժողովրդական լուսաւորութեան գործը կարող է առաջադիմել ու զարգանալ միայն այն ժամանակ, երբ մեր պետական կազմի մէջ արմատական բարենորոգութիւն կը մտցվի:

«Պետերբուրգի կայսերական զեղարուեստական ակադէմիան փակված է: Փակվելուց առաջ տեղի են ունեցել ուսանողական մի քանի աղմկալից ընդհանուր ժողովներ, որոնցից մէկը ժամանակ ընդհանուր ընտրութիւն ունեցող որոշումներ են արվել: Ակադէմիան փակված է անորոշ ժամանակով, որովհետև նրա ուսանողները անհնար են համարում հանգիստ խնձով ու անվրդով պարագիւ զեղարուեստով ներկայ ալեկոծ ժամանակում:

Ֆինանսների մինիստրութեան մէջ շուտով ընտրութեան կառնիքի բանտարկան օրվայ երկարութեան կամ բանտում ժամերի խնդիրը: Այդ խնդրի լուծման մէջ մասնակցելու հրաւերվում են բացի մինիստրութեան ներկայացուցիչներից, նաև գործարանական աշխատիչները: Բայց բանտարկան օրվայ տեղաւորութեան խնդրից՝ ընտրութեան է առնվելու նաև աշխատանքի վարձի և բանտներէ ազատութի մի քանի այլ պայմանները:

Յունվարի 23-ին Պետերբուրգի երդուեալ-հաւատարմատարներն ընդհանուր ժողով կայացրին: Ժողովի ընտրութեան առարկան էր յունվարի 9-ի զէպերից: Պնասվածներին և նրանց ընտանիքներին իրաւաբանական օգնութիւն տալու խնդիրը: Ժողովը կազմեց մի յատուկ յանձնաժողով՝ յունվարի 9-ին սպանվածներ ընտանիքներին նիւթական օժանդակութիւն հասցնելու, ընտրել 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով էլ, որի պարբեր է լինելու հաւաքել փաստացի նիւթ և մարա-մասն տեղեկութիւններ, թէ արդեօք յունվարի 9, 10 և 11-ին Պնասվածները չեն կարող բազարացիական և զբէական դատ բացանալ: Մի և նոյն օրը կայացաւ և երդուեալ-հաւատարմատարների օգնականների նիստը, որը որոշեց միանալ երդուեալ-հաւատարմատարների ժողովի որոշումներին:

Մինիստրների կոմիտէում դաւանութեան ների հարցի ընտրութիւնը նշանակված էր յունվարի 25-ի նիստում: Ս. Սինոդի հիւանդացած օրէր-պրօկուրոր Կ. Պ. Պրեզօնսցեվի փոխարէն նիստին պէտք է մասնակցէր նրա օգնականը՝ սենատոր Վ. Կ. Մալէբը:

Յունվարի 21-ին Պետերբուրգում Չեկուշկինի զեղատան պահեստը մտնում է մի երկտասարգ օֆիցեր և խնդրում, որ թույլտրման իրան օգտվելու մի վայրկեան հետախօսեց Բաղաբարձութեամբ անում են պ. օֆիցերներն այդ սերտիլ ծառայութիւնը, բայց նա շատ երկար է զբաղեցնում հետախօսը: Չեկուշկինի գործակատարը, որ տեղով հրամանով պէտք է խօսէր խնութի գործերի համար, կամացուկ նկատում է, որ օֆիցերը երկար է զբաղեցնում: Օֆիցերը խօսել է այդ, վերաւորվում և սուրը հանում լսիւմ գործակատարի մէջքին:

յանձնէ երեխային: Կոմսուհին յայտնեց, որ երբէք այդ բանը չի անի: Սաքսոնական զաւորանի խորհրդական Կէրնէր սպանաց, որ սաքսոնական երկու ոստիկանները օգնութեամբ նա կը խլէ երեխային ուժով, այդ պատճառով կոմսուհու փաստաբանը դիմեց իտալական իշխանութիւններին՝ խնդրելով պաշտպանութիւն: Իշխանութիւնները յայտնեցին, որ երաշխաւորում են կոմսուհու ընտանիքին անձնական իրաւունքները և նրա անձնական ապահովութիւնը:

ՍՕՅԻՄ: Կայացաւ սլաւոնական ընկերութեան ընդհանուր ժողովը: Այդ վերջինին է պատկանում նորիւրաւութիւնների ժողովը ի նպատակ ունի վերաւորների և հիւանդների Հեռաւոր Արեւելքում: Նուիրատուութիւնների վերջում հասաւ 80,000 Ֆրանկի, որը ծախսվեց բոլորական հիւանդանոց պահելու համար Գոնիմուրիումը Խաբըրին մօտ: Ժողովը ընտրեց ութ պատւաւոր անդամներ սլաւոնական աշխարհի վաստակաւոր գործիչներէ, այդ թւում ուղեւորված բացականցութիւններով և ծախսաւորութիւններով միաձայն ընտրվեց գեներալ Կոլոբակովսկին:

ԼՕՆԻՕՆ: Կոմս Բէնէկէնգորֆ ունկնդրութիւն ունեցաւ թաղաւորի մօտ բուկինգէմեան պալատում: Ունկնդրութիւնը միջնորդութեան չէր վերաբերվում: Թաղաւորը մեծ հետաքրքրութեամբ տեղեկութիւններ էր հարցնում Թաղաւոր Կայսրի առողջութեան և Պետերբուրգի դրութեան մասին:

31 յունվարի
ՊԵՏԵՐԲՈՐԳ: Պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված յունվարի 30-ին Հեռաւոր Արեւելքից: Նիկոլայի ունկնդրութիւնը «Наша Дня» լրագրի շարունակելով ֆրանսական ուղեւորութիւնը, ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել նրան երկրորդ նախագրութիւն:

ՏՕԿԻՕ: Ֆինանսների մինիստրը սարքեց ֆինանսիստների ընդունելութիւն: Մինիստրը մասնացոյց արեց Եւպոնիայի անտեսական ազդեցութեան անդամի զարգացման վրա, որը հետեւեց է պատերազմի: Այդ բարենպաստ հանգամանքից օգուտ ըզդելու անհրաժեշտութեան վրա հիմնվելով, մինիստրը աւելացրեց, որ Եւպոնիայի ֆինանսները վերին աստիճանի գոհացուցիչ են: Անցեալ տարվայ պատերազմական ծախսերի գումարն էր 50 միլիոն ֆունտ, սակայն այնուամենայնիւ թղթադրամների բաց թողնելը երբէք չէ գերազանցել 25 միլիոնից, որոնցից հինգ միլիոնը շրջանառութեան մէջ է Կորեայում և Մանչուրիայում: Թղթադրամների ներքին շրջանառութիւնը սովորական նորմայից չէ անցնում: Պետական ֆոնդները նոյնպէս անյողորդ են: Մինիստրը շնորհաւորեց երկրի ֆինանսական և անտեսական պայմանների այդպիսի փառաւոր դերութեան համար: Եւպոնիական մամուլը քննարկում է անգլո-հայկական դաշնակցութիւնը վերանորոգելու հարցը:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ: Մալիսուդ ցեղին պատկանող մի սրբալի մասն օֆիցերական ժողովարանը վանում հիւսիս-արեւելեան սահմանի վրա և սուբինի հարուստով սպանեց գնդապետ Հարթմանին: Կապիտան Պլանգ յարձակվեց մարդասպանի վրա և զինաթափ արեց նրան: Վերջին հինգ ամիսների ընթացքում դա երկրորդ դէպքն է, որ մալիսուդ ցեղին մի մարդ սպանում է անգլիական օֆիցերին:

ԲԵՐԼԻՆ: Պրինց Լէօպոլդի ուղևորումը դէպի Մոսկովէն գլխաւոր բանակը յետաձգված է կայսրի ցանկութեամբ:

ԷՍՍԷՆ: Բանաւորների պատերազմների ժողովում միաձայն վճռվեց ամեն տեղ աշխատանք սկսել:

ՎԻԵՆՆԱ: Կայսրի խորհրդակցութիւնը Կոշուտի հետ շարունակվեց երեք քառորդ ժամ: Կոշուտ մանրամասն նկարագրեց դրութիւնը: Կայսրը ուշադրութեամբ լսեց նրան, հարցեր տալով: Վիեննայում ապրող ունգարացիները ցոյցեր արարեցին Կոշուտի համար պալատից հեռանալու ժամանակ: Ունկնդրութիւնից յետոյ կայսրը ընդունեց երջնէրցող Ֆրանց Ֆէրդինանդին, որը պատմում էր, թէ Կոշուտի անձնաւորութիւնը նպատաւոր տպաւորութիւն է թողել կայսրի վրա:

ՏՕԿԻՕ, 30 յունվարի: Պաշտօնական Եւպոնիացիները յետ միեկին ունկնդրի արած ոչ մեծ յարձակումները զանազան կէտերում: Յունվարի լոյս 29-ի գիշերը և հետեւեալ առաւօտը ունկնդրը ուղեւորներին մի քանի դերքեր եւպոնիական կենտրոնի աջ թիկունքի վրա և ձախ թիկ վրա: Ունկնդրելի և Լիդերատուհի մօտ ունկնդրի անդադար խրամատներ են փորում: Յունվարի 28-ին եւպոնիացիները բռնեցին գերմանական մի շոգնաւ:

որ ռազմաթիւքների բռնով գնում էր Վլադիվոստոկ:

ԵԱՆԻՅԱՅ: Դաշնութեւ մտցրված է քաղաքացիական վարչութիւն, որովհետեւ եւպոնիացիները ուղում են պահել քաղաքը պատերազմից յետոյ: Եւպոնիացի դատաւոր Նանկին է կանչված քննելու համար, եւպոնիական կառավարութեան արած առաջադրութիւնների պատճառով այն նախադիմել, որով պէտք է Կեանքին մարտկոցը փոխադրվեն Եւպոնիայում բռնված ունկնդրի նաւերի էկզպոսիցի:

ԼՕՆԻՕՆ: Ուէլսի իշխանը օգոստոսին կայացրել է ներկայատանը:

ԼՕՆԻՕՆ: Պարլամենտի բացման համար դիմադրական կուսակցութիւնը պատրաստվել է յարձակում գործել կառավարութեան վրա երկու կողմից: Եւպոնիական, մասնացոյց անկողի վերադարձն ծախսերի չափազանցութեան վրա և մեղադրելով կառավարութիւնը, որ նա խառնական դրութեան է հասցրել զօրքը և պետական, պահանջելով անպայաջ արձակել պարլամենտը և հարաւորութիւն տալ երկրին, որ նա ինքն կարծիք յայտնէ առեւտրի ազատութեան պահպանման վերաբերմամբ: Արդէն կազմված է նոր մինիստրների ենթադրական ցուցակը լոյք Սպէնսէրի զլխաւորութեամբ: Սակայն ազատամիտ խմբերը առաջվան պէս բաժան բաժան են և Սպէնսէրի միացնող փորձը անաջողութիւն ունեցաւ: Դիմադրութեան շաները կասկածելի են երևում:

ՊԱՐԻՉ: Պրինց Լուի Նապոլէօնը Պարիզից ճանապարհ ընկաւ Իտալիա իր մօր մօտ: Ծով և Լատումէ ֆրանսիացի օդաւորները օդաւորիկով թռիչք կատարեցին Լոնդոնից Պարիզ վրայ ժամկայ ընթացքում: Լոնդոնում օրէնսդրական ընտրութիւնները պօրտուգալական պաշտօնակարների ժողովում աջող վարձան ունեցան մինիստրութեան համար:

ՄՕՍԿՎԱ: Երբ կոչ էին կազմում դէպի ուսանողները համալսարանական խորհրդի մէջ տեղի ունեցաւ տարած յնութիւն: Կոչ անելու միտքը թողնվեց: Վճռվեց կուրսային խորհրդակցութիւնների ժամանակ լսել հէնց իրենց ուսանողների կարծիքները:

ՏՕԿԻՕ: Այսօր, անգլո-հայկական դաշնագիրը կապիտալ տարեդարձի առիթով Կոմսուհու բանկէտ տուեց, որին ներկայ էր դեսպան Մակ-Դոնալդը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Գինեւալ-ադելտանտ Կուրօպատկինի ամենապատիւ հեռադիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թիւ յունվարի 30-ից: ՔԱյսօր, յունվարի 31-ին, գիշերվայ 4 ժամին եւպոնիական հեծեալ զօրաբաժինը, բաղկացած 3.0 մարդուց, յարձակում գործեց երկաթուղիական կամուրջի վրա Գինեւալտանտ կայարանի մօտ, Կուրօպատկինի և Գուշիտովին կայարանների միջև, որի ժամանակ ֆրանսիացի կամուրջի վրա ճանապարհը 15 սաժէն երկարութեամբ: Մի քանի ժամանակից յետոյ գնացքների երթևեկութիւնը վերականգնվեց: Յունվարի 29-ին հայկառակորդի հետակ մասերը արշաւանք գործեցին մեր դիրքի վրա Գուշիտովին յայտնի մօտ: Մեր հերթապահ զօրամասերը հրացանային կրակով կանգնեցրին արշաւանքը և եւպոնիացիները ստիպված էին յետ նահանջել: Նոյն թիւն ցերեկով հակառակորդը պաշարող բաւարականից ուղեւորները Պետրովսկին ըլլաւ զաւաթը և Մախէյան գիւղը: Թուրքերից մէկով սպանվեց պօրուհիկ Ստիչինսկի և վերաւորվեցին փոխ-գնդապետ Բոսաովսկի, շտաբկապիտան Նէվլաչին և շտաբ-կապիտան Գարպով: Վերջինը թիկն է: Ստուգված տեղեկութիւնների համեմատ, յունվարի 12-ից մինչև 16-ը մենք գերի ենք վերցրել 221 առողջ և 122 վիրաւոր եւպոնիացիներ: Վերգրեալի մասին ամենապատիւ օրէն գեղաւորներ են Ձեր Կայսերական Մեծութեանը: Գինեւալ-ադելտանտ Կուրօպատկին:

Եւպոնիացի ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՔԱՐ Հրաւիրականներ՝ ԹԱՆՈՒԿԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԼԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նախարարեան
տեղափոխելով Թիֆլիսից ԲՕՍՏՕՎ
Հիւանդների ընդունում է 11-12 ժ. առ.
և 7-8 ժ. երեկոյան:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(т. 4. б. 4.) 71-100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9-2 և 5-7, Վե-
լիամինսկայա փ. № 8.

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
Ա.ՉԳԻ ՀԻԻՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
երեկոյան 5-ից մինչև 7
Վելիամինսկայա փողոց № 8: (Ե.ո.) 62-100

III տարի, ներք. № 11. 1905 № 81.
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Արթուսական ընկերութեան բաժնուն
Ի պատիւ տիկին Վարդուհու 25-ամեայ բնա-
կան գործունէութեան
Հինգշաբթի, փետրվարի 3-ին
Հայոց դրամատիքական ընկերութեան խումբը
կը ներկայացնէ

I
Տ Ա Ր Տ Ի Թ
Կոմէդիա Մօլէրի, 4-րդ գործողութիւնը:

II
ԱՐԴԻՒՆԱԻՌ ՊԱՇՏՈՆ
Կոմէդիա Օստրովսկու, 2-րդ գործողութիւնը:

III
Պ Ե Պ Օ
Կոմ. Գ. Սունդուկեանցի, 3-րդ գործողութիւնը:
Ներկայացումից յետոյ տեղի կունենան շնոր-
հաւորումներ:

Սկիզբն է ժամը 8 ին երեկոյան:
Տեղերի գները բնիքֆրանկային են:
Հետեւեալ ներկայացումը (արժ. № 4) կը կա-
յանայ երկուշաբթի, փետրվարի 7-ին:
Բէֆուստը 8. Արեւիկան
Հերթապահ անդամ վարչութեան
Տիգրան Յովհաննիսեան
Ե. չ. 6. 1-5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Զօրեղաթի, փետրվարի 2-ին, երեքշաբթվայ
փոխարէն Թիֆլիսի ժողովարանի սիրողների
խումբը, անդամների, կանգնողների և նրանց
ընտանիքների համար
կը ներկայացնէ
Բարենաճ մասնակցութեամբ Տ. Ագնիւի և պ.
Անդրանիկի
ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ
Կոմ. 3 գործ. հեղ. Յ. Պարոնեանի, փոխ. Ա.
Սարգսեանի և Ա. Վրոյրի:
Մասնակցում են՝ տ. Ագնիւ, օր. Բնարիկ,
պ. պ. Անդրանիկ, Բոյուի, Երուսղեան, Սո-
շա, Զիլխայեան, Դուշեան:
Տեղերի գները 1 րուբլ. մինչև 30 կօպ.
Սկիզբը ձեռք ժամը 8 1/2-ին երեկոյան:
Հետեւեալ ներկայացումը կը լինի երեքշաբթի,
փետ. վարի 8-ին՝ ԱՆՊԱՏԻ 26-ը ՄԵՎՈՒՄ,
գրամա 3 գործ.

Դ Ե Պ Օ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Երբ. Յակոբջանեանցիներ եւ Սարգսեանց“
Պատրաստի հագուստողէնի խառնութեամբ (Միջաշխան կամուրջ, Գամոյեանի տունը
25-30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների
համար անհատական տարազով պատրաստած հագուստներ:
Գները չափաւոր են և առանց սակարկութեան: (ա. օ.) 7-100

Ն. Ի. ԲՈԶԱՐԺԵԱՆՑ եւ ՈՐԴԻԲ
Ա. Ռ. Ե. Ի. Տ. Ր. Ա. Կ. Ա. Ն. Տ. Ա. Ն.
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ
(Թիֆլիսում)
որ գոյութիւն ունի 1858 թականից և իր ընտիր կերպով պատրաստված ծխախոտերի
համար արժանացել է Բարձրագոյն պարգևների և մեդալների, իր մշտական կրէնտներին

Ն Ա Ս Ա Չ Գ Ո Ւ Շ Ա Ց Ն Ե Լ Ո Ւ Հ Ա Մ Ա Ր
այսու յայտարարում է, որ զանազան գործարաններ, որոնց թւում և «ՄԻՐ» ակցիո-
ներական ընկերութեան, և Մ. Ս. Սաֆարեանի ժառանգների ծխախոտի գործարան-
ները բաց են թողել այնպիսի պայկրոտներ, որոնք իրանց դարձվածքով, գրերի և
էտիքետների վրա եղած մակագրութիւնների միանմանութեամբ, նոյնպէս և կա-
պոնների և արկղիկների ձևերով, եւպոնիկների և փաթեթների համար գործածած նոյն
տեսակի գոյնի թղթերով: Եւպոնիկները չեն տարբերվում մեր պատրաստածներից. մինչդեռ
դրանք վաղուց ի վեր ծառայում են որպէս արտաքին տարբերութեան յատկա-
նշան՝ մեր գործարանի արդիւնաբերած և ահագին քանակութեամբ տարածված
հետեւեալ պայկրոտներին.

№ 8 10 հատը 5 կօպ.	№ 15 Միւսպոխ 10 հ. 5 կ.	№ 7 10 հատը 3 կ.	№ 16 10 հատը 3 կ.
-----------------------	----------------------------	---------------------	----------------------

ուստի, մեր գործարանի պայկրոտները պահանջելիս՝ անհրաժեշտ է առանձին ուշադ-
րութիւն դարձնել կառավարութիւնից հաստատված ետիքետի, ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆԻ



Լ. Ն. Ս. ԲՕՅԱՐԺԻԱՆՑԵՅ ՏՅ Շ-ՄԻ
մակագրութեան վրա
Այսու կարեւոր ենք համարում զեկուցանելու, որ «ՄԻՐ» ակցիոնեական ընկերու-
թիւնը՝ սոյն յունվարի 11-ից առում իր ստորագրութեամբ՝ պ ա ր տ ա լ ո Ր Վ Ե Գ
այդ օրվանից դ ա ղ ա ր ց ն Ե Լ այն պայկրոտների ծախու հանելը, որոնց էտի-
քետները նման են մերինին:
Կեղծողներին ենթարկելու ենք օրինական պատժի:
(Կ. չ. ու.) 9-10

Շաբաթ, դեկտեմբերի 5-ին
ն 2 ա ն ա կ վ ա ծ է
ԴԻՄԱԿԱՅԱՆԴԵՍ
Սկիզբն է ժամը 9-ին երեկոյան:
Պարտաւորեցուցիչ է մինչև վերջը մնալ դի-
մակով: Զգեստի ձևը. դիւնորականները պիտի
լինեն սովորական զգեստով, քաղաքացիները
սև սիւրճակներով, իսկ տեղացիները ազգա-
յին զգեստներով:
Տոմսակները գտնվում են դռնապանի մօտ:
(Ե. 2.) 1-2

ԲԺԻՇԿ Ս. Չ. ՄԻՐԶՈՑԵԱՆ
ԱՉԳԻ ՀԻԻՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2-3 և 5-7
երեկոյան, իսկ տօն օրերին առաւօտեան ժ.
մը 10-11. Սօլօլակի փող. № 6.
(ա. օ.) 38-50

ԲԺԻՇԿ Ա. ՄԻՐԻԱՐԵԱՆԳ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-
թու և վնասական ախտ ունեցող հիւանդներ
ամենայն օր, առաւօտ. 12-2. Երեկոյան 6-7
Մեծ Վանքի փողոց, տուն Կուլանովսկի, դեղա-
տան կից: (ա. օ.) 4-80

Վ Ա Ր Դ Ա Գ Ո Յ Ն
ԲԻՐԵՂԱՅԻՆ ՍԱՊՈՆ
№ 4/11
Գ լ ի ց և ր ի ն ի ԲԱՐՁՐ Հ ա փ:
Տնտեսութիւն: Գրքերի առատութեան
պատճառով:
ՎԱՐԴԻ ԲԵՐԲՈՅՇ ՀՈՏ, —
աշա այդ սապոնի ընտրող բարձր յատկու-
թիւնները:
ՖԵՐԳ. ՄԻԼԼԻԿԻՆՍ
Կօլոզնտա փող., № 4711
Կեօնում և Բիգայում:
№ 153767/72 4-6
հ. 27, ն. 24, դ. 18, յ. 26, մ. 9, յն. 6